

Կ Ա Ր Ծ Ի Ք
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Հրաչյա Արսենի Դանիելյանի՝ «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսությունը նվիրված է ՀՀ-ում էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրների հետազոտմանը և դրանց լուծման ուղղությամբ նոր մոտեցումների ներկայացմանը: Ատենախոսության թեման չափազանց արդիական է և հայ հեղինակների կողմից ոչ բավարար հետազոտված: Ֆինանսական համակարգերի արդի զարգացումներն ու դրանց միտումները վկայում են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի դերի կարևորումը այդ գործընթացներում, քանի որ առևտրի, դրամաշրջանառության և ընդհանրապես տնտեսության կարգավորման համակարգերը պահանջում են վճարահաշվարկային գործուն համակարգերի առկայություն, ինչը թույլ կտա մի կողմից կառավարելի դարձնել գործառնական ռիսկերը, իսկ մյուս կողմից էլ դրանք վերահսկելի դարձնել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից: Այս ամենը կարևոր է նաև ՀՀ համար, հատկապես, երբ կառավարության կողմից անկանխիկ դրամաշրջանառության ընդլայնման ուղղությամբ գործուն քայլեր են ձեռնարկվում: Ինչ վերաբերում է կրիպտոակտիվների ոլորտին, ապա նշենք, որ վերջին տասնամյակների զարգացումները վկայում են դրանց կիրառման շրջանակների և շուկաների անընդհատ ընդլայնման մասին: Մի կողմից դրանք մարտահրավեր են նետում փողի ավանդական պատկերացումներին, իսկ մյուս կողմից էլ դառնում են յուրահատուկ ֆինանսական գործիք, որը կիրառման շրջանակները չեն սահմանափակվում միայն վճարային նպատակներով: Դրանք յուրահատուկ ներդրումային գործիքներ են իրենց ուրույն շուկաներով, գնագոյացմամբ և իրենք իրենց հերթին էլ ազդեցություն են գործում այլ ավանդական

ակտիվների շուկաների վրա: Ներկայում անհնար է պատկերացնել լայն դիվերսիֆիկացմամբ կառավարող ներդրումային փաթեթ, որտեղ ընդգրկված չեն կրիպտոակտիվներ կամ առնվազն ներդրումների կառավարման ռազմավարության ժամանակ հաշվի չեն առնվում դրանց շուկաների զարգացումները: Սակայն կարգավորման տեսանկյունից կրիպտոակտիվները բավականին ռիսկային ոլորտ են, ինչը ֆինանսական համակարգի կարգավորիչներին ստիպում է առավել զգուշավորություն ցուցաբերել: Սրա պատճառը մի կողմից դրանց գործողության մեխանիզմներն են կամ դրանց քիչ վերահսկելիությունը, իսկ մյուս կողմից էլ դրանց շուկաները, որոնք իրենց յուրահատուկ ռիսկերն ունեն ու հաճախ չեն ենթարկվում ավանդական ֆունդամենտալ գործոնների ազդեցության շրջանակներին: Սա է պատճառներից մեկը, որ արդեն տևական ժամանակ է ՀՀ ԿԲ կողմից ֆինանսական շուկայի մասնակիցներին թույլ չի տրվում դրանցով գործառնություններ իրականացնել: Սակայն համակարգի զարգացումները անխուսափելի են դարձնում դա, ու ինչպես ներդրումային, այնպես էլ վճարային տեսանկյունից, այդ գործիքները չեն կարող չկիրառվել ֆինանսական համակարգում և կարևոր է այդ դաշտի կարգավորման համար համակարգի ստեղծումը և դրա հետ կապված հիմնախնդիրների բացահայտումը: Նշվածը միանշանակորեն ընդգծում է ուսումնասիրության թեմայի արդիականությունը և հետազոտության անհրաժեշտությունը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Հեղինակի կողմից, որպես հետազոտության հիմնական նպատակ է դրվել վերլուծության արդյունքում ներկայացնել առաջարկություններ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կառավարման մեթոդների բարելավման ուղղությամբ, որին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- վերլուծել էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթները և զարգացման միտումները ոչ միայն ազգային, այլև միջազգային հարթություններում,

- ներկայացնել վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումները, որոնք կկառուցվեն ոլորտի շահառուների պահանջմունքների և սպասումների իրագործման վրա,

- մշակել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի կառավարման այնպիսի մոտեցումներ, որոնք հիմնված կլինեն ռիսկերի բազմագործոնային չափայնության միասնական համակարգի վրա,

- վերլուծել կրիպտոարժույթների շրջանառության և կենտրոնացված վերահսկողության դաշտում գտնվող էլեկտրոնային փողերի թողարկման գործընթացների փոխազդեցության շրջանակը,

- ներկայացնել առաջարկություններ փողի զանգվածի որոշման բարելավման ուղղությամբ, որոնք հաշվի կառնեն կրիպտոարժույթների ապակենտրոնացված շրջանառությունը,

- առաջարկել տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ, հաշվի առնելով փողի զանգվածում կրիպտոարժեքների ընդունելի ցուցիչներ և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության ուղիներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 110 էջի վրա (առանց հավելվածի):

Ներածությունում հիմնավորվել են ատենախոսության հրատապությունը և արդիականությունը, սահմանվել են նպատակն ու խնդիրները, ներկայացվել ուսումնասիրության առարկան և օբյեկտը, օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ստացված գիտական արդյունքներն ու դրանց գործնական կիրառությունը:

Ատենախոսության առաջին՝ «էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի զարգացումը և արդի մարտահրավերները» գլխում հեղինակի կողմից ներկայացվել են էլեկտրոնային վճարային համակարգերի գործունեությունը և կառուցվածքային առանձնահատկությունները, էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթները և զարգացման միտումները: Բացի այդ

անդրադարձ է կատարվել էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների կարգավորման հիմնախնդիրներին: Այս գլխում գիտական նորույթ չի ձևավորվել և չի հիմնավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ «Կրիպտոարժույթների շուկայի ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» գլխում նախ դիտարկվել են կրիպտոարժույթների ծագումնաբանությունն ու զարգացման միտումները, իսկ այնուհետև առանձնակի ուշադրություն է դարձվել կրիպտոարժույթների կիրառման և դրանց շրջանառության պետական կարգավորման հիմնախնդիրներին: Գլխի վերջում հեղինակի կողմից վերլուծվել են կրիպտոարժույթների շրջանառության էկոհամակարգի ֆինանսական կառավարման բարելավման ուղիները: Այս գլխում ատենախոսի կողմից ձևակերպված գիտական նորույթների երրորդ կետն է ամփոփված:

Ատենախոսության երրորդ՝ «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ֆինանսական կառավարման հայեցակարգային մոտեցումները» գլխի շրջանակում քննարկվել են էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ֆինանսական վերահսկողության բարելավման ուղիները, էլեկտրոնային վճարահաշվարկային գործունեության ոլորտում դրսևորվող որոշ ֆինանսական ռիսկերի կառավարման հիմնախնդիրներ: Այնուհետև առանձնակի ուշադրություն է դարձվել էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերում հաշվետվողականության կատարելագործման հիմնահարցերին: Այս գլխում են տեղ գտել ատենախոսի կողմից ներկայացված առաջին, երկրորդ և չորրորդ գիտական նորույթների հեղինակային հիմնավորումները:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացությունները և կատարված առաջարկները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Տեսություններն ու մոտեցումները, որոնք տեղ են գտել ատենախոսությունում, կարող են օգտակար լինել վճարահաշվարկային համակարգերի և

կրիպտոակտիվների հետ կապված առարկաների դասավանդման ժամանակ և դրանց վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս: Ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել պետական քաղաքականություն մշակող մարմիններին՝ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոակտիվների շուկայի կարգավորման և վերահսկողության, իրավական դաշտի ձևավորման և հիմնական սկզբունքների մշակման համար, վճարահաշվարկային համակարգի մասնակիցներին և ֆինանսական ինստիտուտներին՝ ոլորտի ռիսկերի կառավարում իրականացնելու համար:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսությունում հեղինակը ներկայացնում է մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ առանձնացնում է հետևյալ չորս կետերը.

- մշակվել են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի գնահատման մոտեցումներ՝ կիրառելով ռիսկային գործոնների չափայնության միասնական համակարգ և շահառուների նպատակադրումներից հավանական կորուստների չափման համապարփակ ցուցանիշներ,
- էլեկտրոնային վճարման գործիքակազմի ընդլայնման շարժառիթների և զարգացման միտումների ուսումնասիրությունների հիման վրա առաջարկվել են վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ, հիմնված ոլորտի շահառուների պահանջմունքների բավարարվածության աստիճանի վրա,
- ֆինանսական շուկայում կրիպտոարժեքների շրջանառության վերլուծությունների հիման վրա առաջարկվել են տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցիչները և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության գնահատումները,
- էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայությունների արդյունքների գնահատման հիման վրա առաջարկվել է էլեկտրոնային վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության վարկանիշավորման

համակարգ, վերահսկողության նպատակով վճարահաշվարկային գործունեության հաշվետվողականությունը օգտագործելով նաև որպես մոտիվացիոն գործիք:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնք թեև ատենախոսության գիտական արդյունքների և արժանիքներ վրա էական ազդեցություն չեն ունենում, սակայն ցանկալի է, որ հեղինակի կողմից հաշվի առնվեն հիմնականում հետագա գիտական աշխատանքների շրջանակներում: Մասնավորապես.

1. 1-ին նորույթի ձևակերպման մեջ նշում է, որ մշակվել են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգի գործունեության ֆինանսական ռիսկերի գնահատման մոտեցումներ՝ կիրառելով ռիսկային գործոնների չափայնության միասնական համակարգ և շահառուների նպատակադրումներից հավանական կորուստների չափման համապարփակ ցուցանիշներ: Սրա շրջանակներում էլ 88-րդ էջում հեղինակն առաջարկում է «ռիսկերի բազմագործոնային գնահատման մոտեցում» հիմնված նպատակադրումների և դրանցից բխող բացասական շեղումների վրա»: Սակայն, ըստ էության, առաջարկը ռիսկերի գնահատման մոտեցում չէ, այլ գործունեության փաստացի արդյունքների և դրանց նպատակադրումների իրարից շեղման հաշվարկ: Վերջինս չի կարող վճարահաշվարկային համակարգում ռիսկի գնահատման բազմագործոնային մոտեցում հանդիսանալ, քանի որ ֆինանսական ռիսկերի հասկացությունն ավելի լայն քան փաստացի արդյունքների ու նպատակների իրարից շեղումը:

2. 2-րդ նորույթի դեպքում նշված է, որ առաջարկվել են վճարահաշվարկային համակարգի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման մոտեցումներ, հիմնված շահառուների պահանջների բավարարվածության աստիճանի վրա, սակայն առաջարկը ըստ էության շահառուների շրջանակում հարցման արդյունքների ամփոփում է, ինչը էական դեր չունի ֆինանսական վերահսկողության և հաշվետվողականության բարելավման հարցում, սակայն կարևոր էլորտի կարգավորման ժամանակ խնդիրների բացահայտման և ռիսկերի գնահատման տեսանկյունից: Այս առումով

պարագրաֆ 3.3-ը վերաբերում է էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի արդյունավետության հաշվետվողականությանը, որի շրջանակներում վճարահաշվարկային համակարգի սուբյեկտների վարկանշային սանդղակ է կազմվել, ինչն, ըստ էության, այդ համակարգի շահառուների հարցման արդյունքների ամփոփում է:

3. 3-րդ նորոյթի մասով նշենք, որ կրիպտոարժեքների շրջանառության վերլուծությունն աշխատանքում սահմանափակվում է դրանց գնային փոփոխությունների դինամիկայի, և շրջանառության ծավալների դիտարկմամբ և դրանցով իրականացվող վճարումների ծավալների վերլուծություն ըստ էության չկա: Համաձայն նորոյթի առաջարկվել են տնտեսության կրիպտոլիզացիայի վերահսկողության մոտեցումներ՝ ընդլայնելով փողի զանգվածի բնութագրման որակական ցուցանիշները և էլեկտրոնային փողերի շրջանառության արդյունավետության գնահատումները: Սակայն առաջինի մասով ընդամենը առաջարկ է կրիպտոարժույթների շրջանառության ծավալը գումարել փողի զանգվածին, իսկ երկրորդի մասով էլեկտրոնային փողի շրջանառության արդյունավետության մասով որևէ գնահատում կամ վերլուծություն չկա: Այս նորոյթի շրջանակներում՝ էջ 66-ում, նշվում է, որ կրիպտոարժույթներով գործարքները, լինեն դրանք վճարային, թե ներդրումային, կրճատում են կենտրոնական բանկերի կողմից ավանդական փողի զանգվածը, սակայն եթե դիտարկենք դրանք, որպես ֆինանսական ակտիվ, որտեղ ներդրում է կատարվում, ապա, ըստ էության, դրանք նույն դերն են կատարում ինչ ցանկացած ֆինանսական գործիք ու կրճատում են փողի զանգվածը, այնպես ինչպես ցանկացած այլ ֆինանսական ակտիվում կատարվող ներդրում: 69-րդ էջում էլ հեղինակի կողմից նշվում է, որ կրիպտոարժույթները կարող են հանդես գալ ինչպես վճարամիջոց, այնպես էլ ներդրումային գործիք, ինչը միանշանակ չի դարձնում փողի ագրեգատների կազմում դրանց դրամական միջոցներին հավասարեցումը: Այս առումով $M*V=P*T$ ֆիշերի բանաձևն առաջարկում է փոփոխել, փողի զանգվածին ավելացնելով կրիպտոարժույթների շրջանառությունը, սակայն առաջարկվող բանաձևում միավոր փողի շրջապտույտի արագության բաղադրիչը չկա: Մյուս կողմից էլ, չի մեկնաբանվում «կենտրոնական բանկի ռեստրի կողմից գնահատված կրիպտոարժույթների շրջանառություն» հասկացությունը և

պարզ չէ, թե ԿԲ-ն ինչպես է գնահատելու այդ ծավալը: Այստեղ հնչող հիմնական հարցը այլ խնդրում է: Այն է. կրիպտոակտիվները որպես փող ճանաչվում են թե ոչ: Այսինքն դրանք կրիպտաարժույթ են, թե ուղղակի կրիպտաակտիվներ, որոնք կարող են կիրառվել նաև վճարումներ իրականացնելու համար, ինչպես շատ այլ ֆինանսական ակտիվներ:

4. 79-րդ էջում հեղինակը, հղում կատարելով այլ աղբյուրի, առաջարկում է Ն2 նորմատիվի հաշվարկման ժամանակ վճարահաշվարկային կազմակերպությունների իրացվելիության կառավարման շրջանակներում համադրել բարձր իրացվելի ակտիվներ և հրատապ պարտավորություններ հոդվածները՝ այսինքն առավել լայն իրացվելիության նորմատիվը ցանկանում է փոխարինել ավելի նեղ ցուցանիշով: Բացի այդ հետագայում 3.1.3 գծապատկերում իր կողմից առաջարկվող նորմատիվների մեջ թողնում է ԿԲ կողմից ընդունված ու ներկայումս կիրառվող մոտեցումը: 80-81 էջերում առաջարկում է «կրիպտոլիզացիայի առավելագույն աստիճան» անվանմամբ նորմատիվ, որը հաշվի է առնում կրիպտոարժույթների առկայությունը վճարային գործառույթներում, սակայն նշում է, որ այդ նորմատիվը մակրոմակարդակի է: Այդ դեպքում ինչպես պետք է առանձին վճարահաշվարկային կազմակերպությունների համար հաշվարկվեն ու համադրվեն նման ցուցանիշներ, ինչպես վերահսկվեն դրանց սահմանաչափերը, ու ինչպես է դա համարվում նորմատիվ վճարահաշվարկային կազմակերպությունների համար: Սա ըստ էության ցուցնիշ է, որի որոշակի մակարդակը ԿԲ կողմից կարող է ուղենիշ համարվել կարգավորումների կամ սահմանափակումների հետագա փոփոխության համար: Բացի այդ, նորմատիվի հաշվարկման սկզբունքը այդպես էլ հեղինակի կողմից չի նշվում:

5. 1.2 և 2.1 պարագրաֆները վերնագրված են համապատասխանաբար «էլեկտրոնայի» և «կրիպտոարժույթների ծագումնաբանությունն ու զարգացման միտումները», սակայն երկու պարագրաֆներում էլ միտումների մասով ոչինչ ներկայացված չէ, իսկ 3.2. պարագրաֆում կատարված ցուցանիշների վերլուծությունը, որը վերաբերում է վճարահաշվարկային համակարգում վճարումների ծավալի և քանակի հետ կապված ընդամենը 1 տարվա համար է

(2019թ.), կարծում ենք առավել լայն հատվածի դիտարկումը ավելի հիմնավոր կդարձնեն կատարվող եզրակացությունները:

6. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական վրիպակներ կամ պմբագրման կարիք ունեցող մտքեր: Մասնավորապես, առկա են ոչ գիտական ձևակերպումներ կամ եզրակացություններ, որոնց հիմնավորումները կամ աղբյուրները հեղինակը չի ներկայացնում: Օրինակ՝ ատենախոսության 13-րդ էջի երկրորդ պարբերությունում նշվում է, որ «քիչ չեն այն դեպքերը, երբ էլեկտրոնային փողը շփոթում են անկանխիկ վճարահաշվարկային գործիքակազմի հետ», սակայն նշված չէ ոչ աղբյուրը, ոչ էլ շփոթելու դեպքերը: 14-րդ էջում նշվում է, որ «փորձը ցույց է տալիս, որ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերից օգտվելու փորձ չունեցող և դրանց կասկածանքով վերաբերվող սպառողները փոխում են դրանց նկատմամբ վերաբերմունքը առաջին իսկ հաջողված փորձից հետո»: 84-րդ էջում նշվում է, որ «Փորձը ցույց է տալիս, որ երկրների մի մասը հսկողության շրջանակում ներառում են միայն համակարգային նշանակություն վճարահաշվարկային միջավայրը, իսկ օրինակ եվրամիությունը ներառում է ոչ միայն համակարգային նշանակություն ունեցող համակարգերը», սակայն չի կատարում հղում նման տեղեկատվության աղբյուրներին: Կարծում ենք նման ծրարկերումները գիտական առումով կոռեկտ չեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը ներկայացված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժանիքները և ստացված արդյունքների կիրառականությունը: Ատենախոսությունը աչքի է ընկնում իր դրական արժանիքներով, կատարված է ինքնուրույն հետազոտություն, վերլուծված են տեղեկատվական բազմաթիվ աղբյուրներ, ուսումնասիրված են էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման վերաբերյալ տեսական մոտեցումներ, դրանց հիման վրա ներկայացված են կարևոր արդյունքներ: Ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությունների ձևավորման նկատմամբ սահմանված պահանջներին: Ատենախոսությունը կարելի է որակել որպես էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և

կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները հաջողված գիտական հետազոտություն, որի արդյունքում ձևավորվել են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սեղմագրում ներկայացված 6 հոդվածները հրատարակված են ԲՈԿ-ի կողմից ընդունելի պարբերականներում: Դրանք արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, նաև որպես գիտական նորույթ հեղինակի կողմից ներկայացված մոտեցումները:

Եզրակացնելով նշենք, որ Հրաչյա Արսենի Դանիելյանի՝ «Էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի և կրիպտոարժույթների ֆինանսական կառավարման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, և հեղինակն արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու**


24 օգոստոսի 2022 թ.



Է. Վ. Աղաբեկյան

**Է. Վ. Աղաբեկյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար՝**

24 օգոստոսի 2022 թ.



Ն. Տ. Դարբինյան